հասին մօտ 'ի քաղաքն Համա, եւ անդ 'ի վերայ հասին ոմանք 'ի խնդրակաց, քանզի կասկած առեալ էին թէ Եղիազար 'ի կարաւանին է. այլ կանխաւ զգացեալ նորա զայս, խոյս ետ գիշերայն, և էանց ընդ երիս իջեւանս 'ի միում աւուր եւ խնդրակքն եկեալ որոնէին զնա 'ի կարաւանին 'ի մէջ ուխտաւորաց, և ոչ գտեալ անդ՝ կալան զումանս 'ի Հայոց՝ ընդ որս եւ զերեմիա Զէլէպի, և 'ի նոցանէ խնդրէին զնա։ Իսկ նոքա բազում բանիւք ցուցին՝ թէ ոչ գիտեմք ուր իցէ. յաւելին ոմանք ասել, թէ մի խնդրէք զնա 'ի զգեստս Հայոց գտանել, այլ այլազգւոյ։ Տեղեկացեալ ապա խնդրակացն՝ թէ այր ոմն այնպիսի մեկնեալ է 'ի գիշերի 'ի կարաւանէն, պնդեցան զհետ նորա յայլ և այլ ճանապարհս և ոչ կարացին գտանել։

Իսկ Եղիազար անցեալ ընդ Անտիոք եկն և նստաւ 'ի Պէյլան քաղաք. եկն անդ առ նա եւ Դաւիթ, որ նստաւ առանձին Կաթուղիկոս 'ի Բերիա, որ և հերքեալ էր յիշխանութենէ, և 'ի կողմն Եղիազարու լեալ քաջալերէր զնա։ Եւ եղեւ 'ի ժամանել կարաւանին յայն տեղի՝ զգացին ոմանք 'ի Հայոց՝ թէ անդ է Եղիազար, և եկեալ առ նա խօսէին ընդ նմա. եկն և Երեմիա Զէլէպի՝ եւ սկսաւ կազել բազում բանիւք ընդ Եղիազարու, զիա՞րդ ասէ ձեռն արկեալ յայդպիսի գործ՝ 'ի վտանգ արկեր զանձն քո. խօսեցաւ եւ զայլ բազում ինչ ըստ իմաստութեան իւրում. և տեսեալ առ նմա զԴաւիթ՝ ասէ. ահաւադիկ և դա զանուն ստացաւ Կաթուղիկոսի, իսկ օգուտ և ոչ մի, թող զաղմուկ խռովութեանն և զպատաւումն ժողովրդեան։

Իսկ Եղիազար այլ և այլ բանիւք լուեցուցեալ զերեմիա, ասէ ցնա. տեսցես և զարմացիս, թէ զի՞նչ օգուտ լինիցի. և յետ ճաշելոյ անդ 'ի միասին, ելանտի Եղիազար, և յառաջեալ քան զկարաւանն, եկն եհաս 'ի Պրուսա. եւ անտի ելեալ չուս արար գնալ յԱդրիանուպոլիս առ Եպարքոսն. այլ յառաջ քան զինքն յղեաց արս հաւատարիմս առ Ասլրս Զէլէպի, որ էր առ Եպարքոսին. և էր իւր մտերիմ եւ խորհրդակից, և ապդ արար նմա զգալստենէ իւրմէ։

Իսկ Մարտիրոս Կաֆացի՝ որ յառաջնմէ հասեալ էր յԱդրիանուպոլիս, գուն գործէր ինքն յանկուցանել բա-